



«Քեզ երկրպագեմք, Փայտ կենաց, բարձուղ աստուածային մարմնոյն Եւ պարծանք ազգի մարդկան »:



Մարտի 18-ին ԳՀՃ Արտաքին հարաբերությունների գրասենյակի պատասխանատու Հարություն սրկ. Քեշիշյանը և Գ լսարանի սան Ժորա դպիր Հակոբյանը ներկա եղան «Չորեքշաբթի» գրական ակումբի չորրորդ տարեդարձին և չորրորդ համարի տպագրման շնորհանդեսին, որը տեղի ունեցավ Երևանի պետական մանկավարժական համալսարանի գրադարանում: Հընթացս միջոցառման՝ բարեշնորհ սարկավազն իրնորհավորանքի խոսքը հայտնեց գրական ակումբի անդամներին՝ գլխավորությամբ ակումբի հիմնադիր Տիգրան Պետրոսյանցի և փոխանցեց ճեմարանի տեսուչ հոգեշնորհ Ս. Գարեգին վրդ. Համբարձումյանի բարեմատթանքն ու օրհնությունը:



ՄԱԿ-ի օրերը ճեմարանում



Մարտի 27-ին Գևորգյան հոգևոր ճեմարան այցելեցին ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի աշխատակիցները՝ գլխավորությամբ գրասենյակի պատասխանատու Տանիա Ռադոչայի: Վերջիններիս ճեմարան կատարած այցելությունը տեղի ունեցավ ԳՀՃ դասախոս Ինգա Հարությունյանի նախաձեռնությամբ: Հյուրերը սկզբում հանդիպեցին ԳՀՃ տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանի հետ, ապա՝ ճեմարանի Ե լսարանի գործնական և դավանաբանության հոսքերի և քահանայից պատրաստման Գ լսարանի սաների հետ: Դասախոսությունը նվիրված էր Հայաստանում երեխաների պաշտպանությանն առնչվող հարցերին, ինչպես նաև UNICEF-ի իրականացրած գործունեությանը:

Իսկ արդեն հաջորդ օրը՝ մարտի 28-ին ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղան հիմնադրամի տնօրեն Կարեն Նազարյանի նախաձեռնությամբ Գևորգյան հոգևոր ճեմարան այցելեց ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (UNFPA) տնօրեն Գարիկ Հայրապետյանը: ԳՀՃ տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանի հետ հանդիպումից հետո հյուրերը բանախոսություն ունեցան ԳՀՃ քահանայից պատրաստման լսարանում: Զեկույցը նվիրված էր Հայաստանում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի գործունեությանը, ինչպես նաև բնակչության աճի և նվազման սոցիալական ուսումնասիրություններին:



Ուխտագնացություն Վայոց Ձոր

Մարտի 26-ին ԳՀՃ Բ լսարանի սաները Ս. Գարեգին վրդ. Համբարձումյանի առաջնորդությամբ, դերասան Հրանտ Թոխատյանի և պրոդյուսեր Արմեն Համբարձումյանի հետ ուխտավորաբար այցելեցին Նորավանք: Ուխտի Պատարագ մատուցելուց հետո, Հրանտ Թոխատյանը զրույց ունեցավ ճեմարանականների հետ մարդու կյանքում արվեստի դերի և Հայ արդի մշակութային կյանքի մասին: Հավարտ զրույցի ուխտավորները այցելեցին Խաչիկ գյուղը, որտեղ տեղի համայնքի, եկեղեցական երգչախմբի և հոգևոր պատասխանատու Արսեն սրկ. Մատթևոսյանի հետ միասնաբար կատարեցին երեկոյան աղոթք: Ուխտագնացության վերջին նպատակակետն էր Խաչիկ գյուղի սահմանապահ զորամաս, որտեղ սաները ծանոթացան զինվորականների ներքին կյանքի մի շարք կարևոր հարցերին: Ուխտագնացությունն ավարտվեց Մուրբ Գրքի սերտողությամբ:



Հանդիպում ԶՈՒ սպաների հետ

Մարտի 29-ին ԳՀՃ ավագ լսարանների սաները հանդիպում ունեցան ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ գնդապետ Ա. Թորոսյանի և մարտական պատրաստվածության գծով տեղակալ գնդապետ Ս. Բաղասյանի հետ: Հանդիպման ընթացքում մանրամասն քննարկվեց անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստության մեջ գնդերեցների ունեցած դերը և մարտական պատրաստվածության կազմակերպման հիմնական ուղղությունները, ինչպես նաև զինվորականները պատասխանեցին բանակային կյանքի վերաբերյալ ուսանողներին հետաքրքրող հարցերին:





Անառակ որդին

Որդու կարոտը մշտապես սրտումս պահած, ձեզ բուրբիդ ծանոթ ունեցվածքը վատնած, անառակացած, բայց և ապաշխարությամբ հոգու ձեռքերը վեր կարկառած որդու հայրն եմ: Այն օրից, երբ որդուս հրաժեշտ տվի, թեև ընկճվեցի, բայց առավել զվարթացավ հոգիս, որովհետև զգում էի, որ տառապանքն ու ունայնահոգ աշխարհի անկոպար հոգսերի մտայնությունները, վշտակրություններն էին, որ պիտի նրան դարձնեին առ բազումոդորմ երկնավոր Հայրն ու գորովագույթ ընտանիքը. այո՛, նրա զոջումը տիեզերական անձիբի աստղերի շենշող ժպիտը պիտի արթնացներ երկնակամարի հորիզոնում: Ինչքա՛ն էր նվում սիրտս, երբ դուրս էի գալիս խնձորենիների ստվերախիտ պուրակը, որտեղից հովասուն լեռները հովանի էին անում ալպյան մարգագետինները, և սիրառատ հոգուս թև էր տալիս որդուս մոտ մնացած կարոտը, ինչքա՛ն ծանր էր կորուստը մեկի, որը կարծես լքված ու մերժված մեկը լինեք. չթվա, թե զուրկ էի սպասավորների ջերմ խոսքերից ու հոգատար վերաբերմունքից, ամեննին, զուրկ էի սրտիս հոլանի լարերը տավղահարող որդուս ներկայությունից: Բայց սիրտս հաճախ նվաղում էր, երբ հիշում էի, որ ինձնից հեռացել ու օտար աշխարհ էր գնացել, իրեն մեղսաշատ կյանքի հնձանն էր նետել, որտեղից, ով գիտի, ինչպես խորասույզ ճահճից, կարո՞ղ էր ազատվել: Բայց գիշերը, ինչպես տեսանող սաղմուսերգու Դավիթը, ես նույնպես արտասովախառն աղոթում էի, որ Ամենագորն իր ողորմությամբ որդուս վերադարձնի ինձ: Ամեն ինչ ունեի, բայց կարծես լինեի ախտաժետ Հոբի նման անինչ, քանի որ Տիրոջ պատվիրաններից պանդխտացել էր մեկը, այն էլ իմ որդին: Մխիթարությունս Տիրոջ պարգևածներն էին, բնության հրաշագեղ պատկերները՝ երփնագեղ անամոնների արբեցնող բույրը, սոճուտների անվերջանալի անտառները, դաշտերում որոճող կենդանիները, պար բռնած լենաշղթաները, պտուղներով կախված ծառերը, զեղզեղող տխակներն

ու բաձրաթոյչ արծիվները և մյուս որդիս, այն մեկը, որը չգնահատեց այն, ինչ որ եղբոր բացակայության ընթացքին իրենն էր: Կարոտի մեղրամոմը կաթիլ առ կաթիլ ավելանում էր անձրևող հոգուս աղոթամբունջ լարերին, քանի որ մեծ վիշտ է հոր համար զավակին կորցնելը: Բայց ահա այն օրը, երբ դարձյալ սպասման խոնարհ հպատակ էի և աչքս հեռու ճանապարհին էի հառել, նկատեցի մեկին, ինչպես աղջամուղջում մարմրող լույսը, որի աղոտ հայացքը ցնցեց հոգիս. սիրտս ինքնակորույս բացականչում էր: Եվ ահա հոգեպարար բերկրանքով, կարծես լուսնի մանված ցուլքի միջից հրճվանքով պարուրված լինեք հոգիս: Ամեն օր՝ աբլորականչից մինչև վերջալույսի մարող ճառագայթների մոխրացումը, սպասման մեջ էի, սրտի գաղտնի խորհրդով զգում էի, որ Աստված պիտի որդուս ձեռքը բռնած դարձյալ ինձ այցելի: Երկնային էր այն հոգեզվարթությունը, աստվածային անմար սիրուց ծաղկած անթառամ, հոտանույշ մի բողբոջ, որն ասես ոռոգվում էր սիրո կարկաչող վտակներով: Բայց մյուս որդուս սրտի սափորը կաթ-կաթ լցվում էր նախանձի՝ ասելության վերածվող մաղձը և հղիացածի ընչաքաղցության վալեի էր հուզում սիրտը: Այո՛, ձեզ թվում էր՝ այս որդիս Հակոբի Հովսեփ որդու նկարագիրն ուներ, որ սրտացավորեն մնում էր նրա մոտ և հոգում նրա մասին, բայց ո՛չ մի անգամ Հովսեփը չնախանձեց և չատեց հոր կողմից օրհնությունների և զովասանքների արժանացող որդիներին: Ինչպես աղվեսներն էին Սամիստնի թշնամիների անդաստանները ամայացրել, այնպես էլ գազանացած վայրահաչ սատանան էր փորձում որդիներին հոգու անդաստաններից վերացնել բարության պտուղների սերմերը, բայց նրա չարաթույն դեմքն է՛լ ավելի էր դժգունացել, երբ տեսել էր մեղա եկող որդուս:

Պատրաստեց Ռոբերտ դպիր Ոսկանյանը

Պատկերը հիշողություն է

Քրիստոնեության այգաբացին, երբ գրվում և տարածվում էին Ավետարանները, խոսքի հետ ձևավորվում և զարգանում էր մի նոր արվեստ, որտեղ խոսքն ու պատկերը ձուլվում էին իրար ու դառնում մեկ միություն:


Ավետարանական թեմաներով պատկերագրությունը բոլոր ժամանակներում էլ համահավասար քայլել է գրավոր խոսքի հետ և շատ դեպքերում առավել արտահայտիչ ու առավել հետաքրքրական է եղել ընկալողի համար:

Քրիստոնյաներիս համար այս պատկերները նմանվում էին առակների, որոնք իրենց խոսքում օգտագործում էին մարգարեները, իսկ հետագայում հենց ինքը՝ Հիսուս Քրիստոս: Առավել ազդու էր պատկերի թողած տպավորությունը, քան թե խոսքի միջոցով ստեղծվող պատկերը, ուստի հետաքրքիր էր, որ քարոզչության ընթացքում պատկերները որակվեցին որպես հիշողություններ, որոնք վեր էին հանում պատկերի հոգևոր իմաստը: Ամենին էլ պատահական չէր, որ ավետարանական մյուս դրվագների կողքին իրենց ուրույն տեղն ունեցան Մեծ պահքի շրջանում յոթ կիրակիների ավետարանական ընթերցումների նկարագրողումները. չէ՞ որ դրախտից վտարված մարդը հոգեպես և մարմնաբար պետք է հաղթեր աշխարհին և արժանի դառնար երկնային դրախտ վերադառնալու խոստումին:

Ուստի տարբեր ժամանակների նկարիչները մեծ ուշադրություն են դարձրել այս գաղափարներին և փորձել են հնարավորինս ընդգրկուն ներկայացնել ավետարանական հատվածները: Դրա հետևանքով բազմաթիվ մանրանկարիչներ, որմնանկարիչներ, փորագրանկարիչներ, քանդակագործներ հղացել են այնպիսի արժեքներ, որոնք արվեստաբան ու արվեստասեր ուսումնասիրողներին հմայել են և ի հայտ են բերել բազմաթիվ աշխատություններ՝ Բուն Բարեկենդանի, Արտաքսման, Անառակի, Գալստյան և մյուս կիրակիների պատկերագրմանը նվիրված: Այս ամենով հանդերձ, սակայն, չենք կարող չհամաձայնել Վարդան Դևրիկյանի այն մտքին, որ «Համաշխարհային արվեստում ինչպես որ «Պայծառակերպությունը» կապվել է Ռաֆայելի, իսկ «Խորհրդավոր ընթրիքը»՝ Լեոնարդոյի հետ, այնպես էլ «Անառակ որդու վերադաձը»՝ Ռեմբրանդտի անվան հետ, և այս թեմաների մարմնավորումն այլ կերպ, քան այս հեղինակների գործերում է, թերևս դժվար է պատկերացնել»:

Պատրաստեց Հրաչյա-Ժորա դպիր Հակոբյանը

Ամենից վատը ոչ թե ընկնելն է, այլ մնալը գետնի վրա:



Մեր մայրերն իրենց հայացքը միշտ ուղղել են դեպի Աստվածամայրը և փորձել են նմանվել Աստվածամոր կերպարին իրենց աստվածասիրությամբ, առ հայրենին և առ ընտանիքն ունեցած սիրո մեջ: Մեք փառք ենք տալիս Աստծուն, որ նման հատկություններով և արժեքներով, նման ոգով և նկարագրով օժտված հայ տիկնայք ունենք, հայ մայրեր ու քույրեր:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԳԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Նշանավոր ճեմարանականի անկյունը

Լևոն Շանթի աշխարհայացքը

Հայ մեծանուն գրող, նշանավոր մտածող Լևոն Շանթը (Լևոն Մեղրոսյան), որի անունը մշտապես զարդարելու է հայ գրականության ֆասադը, հայի անգուգական տեսակի մեջ յուրահատուկ է ստեղծագործական իր ուրույն խառնվածքի տարրերով, իր գրական-մանկավարժական, հասարակական-քաղաքական հայացքներով: Նրա անունն անջինջ է Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանական՝ Հայաստանի խորհուրդի գործունեությանը նվիրված էջերից: Հայերենի՝ պետական լեզու ճանաչվելու մասին օրենքի հեղինակը Լևոն Շանթն էր, որը այդ տարիներին խորհրդարանի փոխնախագահն էր. նրա գլխավորությամբ էր, որ 1920 թ. մայիսին կազմվեց հայոց պատվիրակություն՝ հայ-ռուսական բանակցությունների համար մեկնելով Մոսկվա, բայց հայոց հարցի պես սա նույնպես գորդյան հանգույցի անլուծելի կծիկով էր մանված: Սակայն նրա մեծագույն դերն այս կյանքում գրականության խորախոր, անհատակ օվկիանի մեջ նավարկելն էր, որով պիտի դառնար արվեստի հարատևող տոն, նոր գրական մի հոսանքի ռահվիրա, հակադիր հոսանքները համատեղող ու վերաթևորող: Շանթի արվեստի էության խորիմաստ դիտարկումը տվել է նրա առաջին քննադատ Ադբայանը. «(նրա) ուսումնասիրության առարկան... կյանքի պոեզիան է»: Նրա գործերում նկատվող երկվությունը պայմանավորված էր նրա աստանդական, հաճող փոփոխվող կյանքով. սկզբից Գևորգյան ճեմարանի կրոնական շունչը, հետո՝ եվրոպական փիլիսոփայական խառնամբոխ մտածումները: Այսպես՝ այս ամենը հիմք դարձան հակասական մտքերի թնջուկում խճճվելու և իրարամերժ հերոսների միջոցով հոգեկան հաճախ կարծես այդ կերպաների միջոցով հասնելու ձգտմամբ, միտումով: Բայց ունայնության, երազային անուրջներով խոսում է փիլիսոփայական իր վեր կանգնել, ինչպես Նիցշեի ստեղծած անապատս, պետք է ավելի վեր ըլլա, քան մըն է» փիլիսոփայական դրույթը Շանթի վրա նա կառուցում է իր վիճակի հարաշարժությամբ էլ ու միստիկական ընդգրկումները, գերմարդուն գովերգող Նիցշեի գեղեցկություններն ու կյանքի հակադեմ նկատումների մասին էր, որ Դեմիրճյանն իր բացասական դիրքորոշումն էր արտահայտում. «Ես չեի սիրում Շանթի նիցշեական մարդատյաց ինդիվիդուալիզմը (անհատապաշտությունը) և արիստոկրատական արհամարհանքը դեպի ժողովրդական զանգվածները, որքան էլ նա հանդես էր գալիս «բարձր պոետիկ» փիլիսոփայության և գունազեղ աֆորիստիկայի (ասացվածքների, մտքերի) լույսի տակ»: Գրականագիտական միտքն էլ հաճախ նույնն է արձագանքել՝ այդ բնորոշումները կերպարային գծերի հետ բաղդադելով:



Դժբախտ և վայրիվերո կյանքը, դառնություններն ու հոգեկան ցասումն արտահայտվեցին նրա գործերում: Տիրաբեկ հոգու անձնական խարանով են կնքված նրա վկայակոչումները: Անձնական կյանքի դառը ճակատագրից զանգատվելով՝ Օշին Պայլն ասում է. «... երբ լավը ընել կուզես, երբ ամենեն լավը ընել կուզես և միայն ցավ կը քաղես»: Այս հեղինակի ցավալի վիճակն էր, կյանքի ընձան: Շանթի հոռետեսական դեկադենտային տրամադրությունների պարզաբանումներից խուսանավելով՝ հարկ ենք համարում խոսել Շանթ մտածողի կյանքի ազդեցիկ կողմերի մասին: Նա «Վերնատան» շունչն ու հոգին էր: Ամեն անգամ Թիֆլիս վերադառնալիս աշխուժացնում էր գրական երեկոյթները և ոգևորված խոսում Եվրոպայում գրական հոսանքների տարածման մասին: Ի զարմանս բոլորի՝ արտասովոր էր Շանթի՝ իր ստեղծագործությունների թատերական ներկայացումների վերածվող գործերի նկատմամբ վերաբերմունքը. նրան չէր հետաքրքրում՝ ինչպես են բեմադրում իր գործերը և չէր էլ գնում նայելու, անգամ Թիֆլիսում «Հին աստվածների» կապակցությամբ «գրական դատերին» նա չեզոքություն էր պաշտպանում, նրան անգամ չէր հետաքրքրում, որ շուրջն իր անունը խանդավառությամբ էր հնչում: Այդ դրաման մեծ ոգևորություն առաջացրեց ոչ միայն հասարակության մեջ, այլև՝ գրական ասուլիսներում: Պատճառն այնն էր, որ Շանթն իր «Հին աստվածներ» դրամայում ներկայացնում էր մարմնի ու հոգու հակադրությունը («Ելեք դու՛րս, դուք, որ զգայարանները չորցնել կուզեք ու կրքերը մարել: Դո՛ւրս այս կղզիեն, դուք, որ թշնամի եք ամեն գեղեցկության, ամեն կյանքի ու շարժումի, ամեն ուժի

ծնունդի»): Խորհրդապաշտական այս գործը շատերի կողմից ընկալվեց որպես տենդենցիոզ մի գործ, աշխատանքի և հոգևորի սուր պայքար, հին և նոր ժամանակների աշխարհընկալումների բախում, հերոսների հոգեկան անվերջ մաքառումների շրջապատյուտ: Շատերն էլ սա համարեցին զուտ պատմական գործ: Նրանց համար գլխավոր կովան հանդիսացավ Ստ. Օրբելյանի «Սյունիքի պատմության» այն հատվածը, որտեղ ներկայացվում է Վասակ Սյունու կնոջ՝ Մարիամի և Մաշտոց կաթողիկոսի՝ առաքյալներից ստացած տեսիլքի համաձայն եկեղեցի կառուցելու նախաձեռնությունը: Սա տեղիք է տվել Վանահայր-Մարիամ կապի նույնացումը Մաշտոց-Մարիամ զուգադրության հետ: Սակայն չենք կարող ասել՝ Շանթն ամենևին ազգային հեղինակ է. պատմությունը սուկ միջոց է սոցիալական ճշմարտություններն արտահայտելու, և նրա դրամաները արդիական փոխաձևությունների են հաճախ վերածվում՝ գաղափարական մեկնաբանությամբ դիտարկելիս:

Շանթով նոր ընթացքի մեջ մտավ հայ գրական կյանքը, Շանթով գրականության պահանջները նորացան հին՝ միջնադարյան ընկալումների կրկնությամբ, և Շանթով է, որ թոնրատնային գրականությունը դուրս եկավ մի նոր հարթավայրի վրա՝ աշխարհի իմաստության փնտրտուքով:

Պատրաստեց Նարեկ Գասպարյանը

Գևորգյան հոգևոր ճեմարանը Միմոն Վրացյանի հուշերում

«Եթե ես կյանքումս որևէ մի լավ բան եմ արել Հայ ժողովրդի համար, այդ ամենը պարտական եմ ճեմարանին, ուր կազմավորվեց իմ նկարագիրը, ուր ես կարողացա խորացնել իմ մտավոր զարգացումը, ձեռք բերել սեփական աշխարհայացք, լայնացնել մտքիս հորիզոնը»: Ս. Վրացյան

Գևորգյան հոգևոր ճեմարանն իր հիմնադրումից մինչև 1917թ., որը պիտի ճեմարանի տարեգրության մեջ մնար որպես դժնդակ մի տարեթիվ, կարողացավ, հանձինս առաջադեմ հոգևորականների և դասավանդող հանրաճանաչ ու նվիրյալ հայագետների, դառնալ մշակութային կյանքի զարկերակը: Այնպիսի նշանավոր անուններ, ինչպես Ավետիս Ահարոնյանի, Լևոն Շանթի, Մանուկ Աբեղյանի, Հակոբ Մանանդյանի անուններն են, որ անխզելիորեն կապված են ճեմարանի կյանքին, վկայում են այդ ամենի մասին: Բայց ճեմարանն անմահացել է նաև իր առօրյայով: Հետաքրքրաշարժ է դարձել ո՛չ միայն մեր հուշագրություններում և ակնարկներում, ու պատմագիտական դպրոցի

Այդ առումով ճեմարանական առաջին գնահատման համար մեծարժեք է Միմոն կյանքի նկարագրությունը: Ճեմարանի պատված էր հիմնադրի՝ Գևորգ Դ-ի Հովհաննես Այվազովսկու էջմիածնական և Քրիստոսի՝ էջմիածնի հիմնադրման գողտրիկ մի անկյուն լինել, որն Միածնաէջ, հայոց սրբություն սրբոց մայրաքաղաքի նկատմամբ սեր և էր, թե ում հաջորդն է և որն է իր չձևավորված ճեմարանի համար դժվար էր 250 աշակերտների սննդով ապահովելը, այդ իսկ պատճառով 10-15 հոգի կրթավարձ էին վճարում, իսկ մյուսները ձրիավարժ էին: Չզարգացած տնտեսությունը հաճախ հարուցում էր ուսանողական խռովություններ, որին մասնակից են եղել Ա. Իսահակյանը Դ. Դեմիրճյանը, Լ. Շանթը... Պահքի օրերին ուսանողների դժգոհության շրջանն էր, քանի որ առանց որևէ մեկի կամքը հարցնելու, բոլորը միասին պահք էին պահում: Առավոտյան կերակուրը մի պնակ կարմիր լոբի էր և թեյ հացի հետ, առավոտյան ճաշին՝ խաշած գետնախնձոր, ոսպով կամ լոբիով ապուր, մախոխ, իսկ ընթրիքին՝ «դրա նման մի բան»: Գայանեի վանքում պահ տված էջմիածնի կովերի կաթից հաճախ տալիս էին ճեմարանականներին: Ակնահաճ էր նաև ճեմարանականի հագուկապը՝ մահուղե բաճկոն, ֆես, իբրև վերարկու՝ հոգևորականի սքեմ:

Այլ և բազմազան կողմերին մասամբ անդրադառնում է Վրացյանը, որը ո՛չ թե ուրիշից լսածն ու ավանդվածն է հուշագրում, այլ՝ իր տեսածն ու զգացածը: Այսքանով չի ամբողջանում ճեմարանի առօրյա կենցաղը. նրանում կան դիպվածներ, որ խորթ չեն այսօրվա մեր ճեմարանականին և նրա առօրյայի մասն են կազմում:

Պատրաստեց Սևակ սրկ. Հակոբյանը



նշանավոր գրական դեմքերի այլև՝ նշանավոր քաղաքական գործիչների ներկայացուցիչների հուշերում:

Չրջանի ընթացքի բացահայտման և Վրացյանի՝ ճեմարանական բազմաշերտ երկրորդ հարկի սրահն ամբողջովին յուղանկարով, Եղիշե Թադևոսյանի և աստվածաշնչյան պատկերներով, լուսագարդ կտավով... Կարծես արվեստի ուսանողների մեջ արթնացնում էր Վաղարշապատի՝ որպես հոգևոր պատկառանք. ուսանողը քաջ գիտակցում առաքելությունը: Տակավին ամբողջապես

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՍ
(հաստված Անդրեյ սարկավազ Կուրանի «Շնորհներ և նզովքներ» գրքից)

Ասում են՝ սատանան գրկված է ստեղծագործելու շնորհից. նա անընդհատ առաջարկում է նույն փորձությունները: Բայց դրա փոխարեն նա ունի ոչ սակավ ակտիվ օգնականներ մարդկանց մեջ: Այդ պատճառով մարդկանց աստվածամարտության ճահճում ժամանակ առ ժամանակ հայտնվում են նոր պղպջակներ՝ անծանոթ հոտերով: 20-րդ դարավերջում (1970-ականներից սկսած) հայտնվում է ևս մեկ հակաքրիստոնեական ծառայություն. այժմ նորաձև է քրիստոնեությունը մեղադրել ո՛չ թե նրա հետամնացության, գիտատեխնիկական առաջընթացին խոչընդոտելու, այլ, ընդհակառակը, այն բանի համար, որ հենց քրիստոնեությունը, պարզվում է, ծնունդ է տվել այդ առաջընթացին և այն բոլոր խնդիրներին, որ կապված են դրա հետ:

Ահա միանգամայն տիպիկ տեքստ, որ կրկին նույն երգն է երգում. «Քրիստոնեությունը էկոլոգիայից դուրս է, ուստի բնության հանդեպ ունի գուտ օգտապաշտական նկատառումներ ունեցող մոտեցում»...:

Այո, քրիստոնեությունը կարծում է, որ բնությունը հոգի չունի: Հինդուսներն ու այլ հեթանոսներ համամիտ չեն, բայց ամենասարսափելի էկոլոգիական աղետները (ինչպես օրինակ Բխտպալում քիմիական գործարանի պայթյունը) տեղի են ունենում հենց «երրորդ աշխարհի» երկրներում: Բանն այն է, որ արդյունաբերող տեխնոլոգիաները ճիշտ գործի դնելու համար հարկավոր է այդ տեխնոլոգիաներին համապատասխան մտավոր պաշար ունենալ, այսինքն՝ գիտական, «արևմտյան» մտածելակերպ, որի համար սարքավորումների ցուցումներին հետևելն ավելի կարևոր է, քան մեղիտացիան հանուն հարևան գետի ոգիների...

Այո, քրիստոնեությունը առանձնացրեց մարդուն բնությունից, մնացած կենդանի ու առավել ևս անկենդան էակներից ավելի բարձր դասեց: Արդո՞ք սա նշանակում է, որ դրանով քրիստոնեությունը մարդուն վերածեց անպատասխանատու գիշատիչ: Ընդհակառակը: Հենց այս կարգավիճակն էլ կարող է իմաստավորվել որպես պատասխանատվություն, որն ազատ է և իշխող:

...Որպեսզի մարդն զգա իր պատասխանատվությունն ամբողջ աշխարհի ճակատագրի համար, նա պետք է զգա իր տարբերությունն այս աշխարհի մյուս բոլոր մասնիկներից: Գայլերը պատասխանատվություն չեն կրում Տիեզերքի ճակատագրի համար: Ճանճերը և ընձուղտները պատասխանատու չեն սավաննաներում էկոլոգիական կարգերի էվոլյուցիոն ընթացքի համար: Երեխան ամբողջ ընտանիքի ճակատագրի համար պատասխանատու չէ: Հայրը, ամուսինը, ավագ եղբայրը կարող են պատասխանատու համարվել հենց այն պատճառով, որ նրանք այլ են և այս առումով առանձնանում են ընտանիքի այլ հաջորդող անդամներից:

Եթե մարդը բնության մի մասն է միայն, որ սկզբունքայնորեն ոչնչով չի տարբերվում դրա մյուս մասնիկներից, նրա վրա չի կարող աշխարհի համար պատասխանատվություն դրվել: Ավելին, եթե բնությանը հեթանոսի հայացքով նայենք, ապա մարդուց ընդհանրապես քիչ բան է կախված. չէ՞ որ յուրաքանչյուր բնական երևույթի հետևում թաքնված է որևէ ոգի և այդ ոգու կամքը: Եթե գետը չորացել է, ապա սա ոչ թե մարդու մեղքն է, որ կտրել է դրա ափերին տարածվող անտառը, այլ ջրահարսների, որոնք չեն հաջողել իրենց պարտականություններում, վիրավորվել են իրենց նվիրված գոհաբերությունների թվի պակասից կամ պարզապես որոշել են տեղափոխվել այլ ջրեր... Ոգեհարցության մեջ ոչ թե մարդը, այլ «մոլորակային լոգոսն» է պատասխանատվություն կրելու Երկիր մոլորակի, իսկ մեկ այլ ոգի՝ «եզրագոր» անունով, ժողովրդի և երկրների համար:

Քրիստոնեությունը, ընդհակառակը, ամուր փոխկապակցում է աշխարհի, բնության և մարդու ճակատագրերը: Եթե մարդը բնության միայն մի մասնիկը լիներ, նրա ճակատագիրը կախված կլիներ ամբողջ աշխարհի ընթացքից: Բայց քրիստոնեության մեջ հաստատվում է, որ աշխարհի ընթացքն է կախված մարդու ընտրությունից. «Թող անիծյալ լինի երկիրը քո արածի պատճառով... Փուշ ու տատասկ թող աճեցնի քեզ համար» (Մանդ. 3:17-18); «Ստեղծվածները ունայնությանը հնազանդվեցին (ոչ իրենց կամքով, այլ նրա համար, որ Աստված հնազանդեցրեց նրանց)... Բոլոր ստեղծվածները հեծեծում են և երկունքի ցավի մեջ են մինչև այժմ» (Հռոմ. 8:20, 22): Նախնադարյան մարդու մեղքերի պատճառով ջրհեղեղ եղավ երկրի վրա և սրբեց դրանից նախկին կյանքը: Բայց քանի դեռ երկրի վրա կա մեկ արդար, Աստծուն ուրացածների մեղքը չի կարող վերջնականապես փոխել արարչագործության դեմքը. «Եվ տեսա մի ուրիշ հրեշտակ, որ ելավ արևելքից և ուներ կենդանի Աստծու կնիքը. և բարձր ձայնով աղաղակեց այն չորս հրեշտակներին, որոնց իշխանություն էր տրված վնասելու երկրին ու ծովին: Եվ ասում էր. «Վնաս մի՛ տվեք երկրին. ո՛չ ծովին, ո՛չ ծառերին. սպասեցե՛ք, մինչև որ կնիք դնեմ իմ Աստծու ծառաների վրա»» (Հայտ. 7:2-3):

Քրիստոնեությունն ասում է. «Դու աշխարհից տարբեր ես, այդ պատճառով դու մեծ պատասխանատվություն ես կրում և՛ քեզ, և՛ շրջակա աշխարհի համար: Եվ այդ պատասխանատվությունը Նրա առաջ է, Ով բարձր է թե՛ քեզանից և թե՛ աշխարհից»...

Դեռևս տասը տարի առաջ քրիստոնեությունը մեղադրվում էր այն բանի մեջ, որ այն ոչնչացնում է մարդուն՝ նրան «Աստծո ծառա» անվանելով: Այսօր նորաձևությունը պատվիրում է դատափետել քրիստոնեությունն այն բանի համար, որ այն չափազանց բարձրացնում է մարդուն՝ հրաժարվելով նրան տարբերների ծառա համարել: Մեղադրանքների տենդագին փոփոխությունն ապացուցում է միայն մեկ բան. եկեղեցուն մարդկության առաջ միմյանց հակառակ և իրարամերժ մեղքեր գործելու համար մեղադրող աշխարհը ուղղակի անառողջ է: Հարբուխով հիվանդ մարդուն թվում է, որ սենյակում չափազանց ցուրտ է, մեկ էլ սկսում է թվալ, որ անտանելի շոգ է: Իսկ սենյակում ուղղակի նորմալ ջերմաստիճան է: Նորմալ էկոլոգիական իրադրություն:

Ռուսերենից թարգմանեց Թովմաս դպ. Առաքելյանը

Դատավորի կիրակի

Շտապողը հետ մնաց, իսկ
հետևից եկողն անցավ առաջինից:
(Ս. Հովհան Ոսկեբերան)

Այս բնաբանը քաղված է «Փարիսեցու և մաքսավորի» առակի վերաբերյալ Ս. Հովհան Ոսկեբերանի մտորումներից: Սուրբ հայրը առակի երկու կերպարներից մեկի մեջ տեսնում է շտապողի, իսկ մյուսի մեջ՝ հետ ընկածի: Սակայն ի վերջո առաջինը հետ է ընկնում, իսկ երկրորդը գալիս և անցնում է նրան:

Այսպիսով՝ ի՞նչ է ներկայացված ավետարանական այս առակում: Երկու հոգի գնում են տաճար աղոթելու: Մեկը՝ փարիսեցի, մյուսը՝ մաքսավոր: Փարիսեցին ուրախ, ինքնագոհ շտապում է հասնել իր ամենասիրելի վայրը, որտեղ նա ամենասպասված հյուրն է և մեծ հարգանք է վայելում: Հասնելով տաճար՝ նա վստահ աղոթքի է կանգնում, շնորհակալություն հայտնում Աստծուն, որ ինքը մեղավորների պես չէ, այլ պահում է օրապահքերը և տասանորդ տալիս: Եվ այսքանով երևի թե ավարտում է իր խոսքը:

Իսկ մաքսավորը, որի երեսը ընդհանրապես մարդիկ չէին կամենում տեսնել, դանդաղում է գնալ առաջ, ամեն մի քայլը փոխելիս կանգնում և մտածում է. «Արժե՞ արդյոք գնալ այնտեղ»: Իր մտքում թերևս խորհում է. «Եթե իմ գործերը մարդկանց առաջ են չար, ապա Աստծո առաջ ես ինչպե՞ս կարող եմ ներկայանալ դրանցով»: Այսպես երկմտելով և երկյուղելով՝ ի վերջո հասնում է տաճար և կանգնում մի անկյունում: Ամաչում է նույնիսկ գլուխը բարձրացնել, իսկ երբ կամենում է որևէ խոսք ասել, աչքի առաջ են գալիս իր գործած բազում հանցանքները, և ծեծելով իր կուրծքը, կարողանում է ասել միայն. «Աստուած, քաւեա՛ զիս՝ զմեղաւորս»:

Եվ այսպես շտապողը հետ է մնում, իսկ հետևից եկողը անցնում է առաջ: Փարիսեցին շտապում է հայտնել իր արած բարի գործերը և կորցնում հայտնում է իր մեղքերը և դրանցից

Հիշում եմ, որ դեռ փոքր էի, նետել երկինք, որ այն հասնի լուսնին, քարը սրընթաց բարձրանում էր վեր, կանգ առնում և նպատակակետին ընկնում: Բայց երբ, օրինակ, կանգնում այն գնալով ավելի ու ավելի էր ընկնում գետը: Ջարմանում էի, թե նետելիս ես ավելի մեծ ջանք էի գետը զցելու համար հարկավոր էր ժամանակ ոչինչ չէի հասկանում, բայց հիմա արդեն հասկանում եմ:



արանք, իսկ մաքսավորը զղջալով ազատվելով՝ առաջ անցնում:

միշտ փորձում էի քարը այնքան ուժգին բայց երբեք դա չէր հաջողվում: Սկզբից սակայն հետզհետե դանդաղում, մի պահ չհասած՝ ավելի մեծ արագությամբ վայր էր էի ձորի բերանին և քար շարտում ներքև՝ արագացնում իր ընթացքը և անպայման ինչո՞ւ է այդպես: Քարը դեպի լուսնին գործադրում, բայց չէր ստացվում, իսկ ուղղակի ոտքով մի փոքր հրել քարը: Այն

Առաջին քարի նման փարիսեցին իր գործերն էր նետում վերև, որոնց կարիքն Աստված չունի: Մի՞թե ամենագետ Աստված չգիտի մեր գործերը, մի՞թե չի տեսնում մեր կյանքը: Փարիսեցին վեր նետված քարի նման իր անձն է բարձրացնում, իրեն անմեղ համարելով, չնայած այն բանին, որ թերևս անմեղ մարդ չկա, և սա է պատճառը, որ նա հետ մնաց՝ չհասնելով իր նպատակակետին:

Իսկ մաքսավորը, անտեսելով ամեն մի ամոթ և մարդկային ամեն տկարություն, խոնարհում է իր անձը, և ցած նետված քարի նման իրենից թոթափում է այն բոլոր մեղքերը, որոնք գործել էր: Մեղքերը քարի պես ընկնում են գետը, որը առաջացել էր նրա հորդահոս արցունքներից, և դրանց հետքն էլ անգամ չէր մնում:

Այս երկու դեպքերի համար Քրիստոս ասում է. «Ով որ բարձրացնում է իր անձը՝ կխոնարհվի, իսկ ով խոնարհեցնում է իր անձը՝ կբարձրացվի»:

Հետևաբար, սիրելիներ՝, պետք չէ երբևէ փարիսեցու պես մեզ արդար և սուրբ համարենք, որովհետև սրա համար Տերը պատվիրում է, թե երբ կատարես այն բոլորը, ինչ հրամայվել է քեզ, ասա՛, թե անպիտան ծառա եմ, որովհետև միայն այն արեցի ինչը պարտավոր էի անել: Այլ հետամուտ լինենք, որ հասնենք արդար և սուրբ լինելուն, հարատև աղոթելով այրի կնոջ պես, որը կարողացավ իր բարի համառությամբ անհրավ դատավորից ստանալ իր ուզածը:

Ինչպես Պողոս առաքյալն է ասում, հետևում մնացածները մոռացած՝ ձգտենք դեպի մեր առջևում եղածները: Եվ եթե ջանասիրությամբ կատարենք այդ ամենը, ապա բարեգույժ Աստված Ինքը մեզ ընդառաջ կվազի և կընդունի մեզ, ինչպես անառակ որդուն:

Այսպիսով, սիրելիներ՝, այնպես անենք, որ եկեղեցի մտնելիս և դուրս գալիս նույնը չմնանք, այլ անկեղծ զղջումով թոթափենք մեզանից մեր բոլոր մեղքերը և նորոգված շարունակենք մեր ընթացքը:

Կինը Քրիստոնեության մեջ

Հիսուսի ապրած ժամանակաշրջանում կնոջ դերը հասարակության մեջ շատ ցածր էր, ինչպես այսօր որոշ մշակույթներում: Հասարակության մեջ նրանք ստիպված էին խուսափել տղամարդկանց ընկերակցությունից: Այդ ժամանակաշրջանի հրեական աղբյուրները լի են կնոջ հանդեպ հակակրանքով, որոնք, ըստ հրեա պատմիչ Հովսեփոսի, ցանկացած հարաբերության մեջ ստորադասված էին տղամարդկանցից: Տղամարդկանց խորհուրդ էր տրվում շատ չխոսել, նույնիսկ իրենց, առավել ևս օտար կանանց հետ: Կանայք հասարակական կյանքից հնարավորինս դուրս էին մղված: Տաճարում նրանք մուտք ունեին միայն կանացի ատյան: Եվ նրանց պարտականությունը աղոթքի կանգնելիս ճիշտ նույնն էր, ինչ՝ ստրուկներինը:

Այնուամենայնիվ, կենսագրական նյութերից ակնհայտ անկարևորությունը:

Հիսուսի և կանանց միջև Ըստ նրանց՝ Հիսուսն իրեն գերծ է սովորությանիս

Հիսուսը ոչ միայն հանդեպ, այլ զարմանալիորեն ուղեկցում են Քրիստոսին իր Երուսաղեմ: Ահա նրանցից որոշների անունները՝ Հովհաննա, Սուսաննա, Հակոբոսի և Հովհաննեսի մայր Մարիամ, Մաղոմե և այլ շատ կանայք: Առաջինը և ամենազխավորը Մարիամ Մագդաղենացին է: Հիսուսն անձնական մտերմություն էր ցուցաբերում նրանց: Առաքյալների խումբը, որը ճամփորդում էր առանց ունեցվածքի և չունեի մշտական օթևան, զգալի աջակցություն ուներ կանանցից և համախոհների ընտանիքներից, ինչպես օրինակ Մարթայից և Մարիամից:



Ավետարանում ներկայացված է այս քննարկվող հարցի Ավետարանիչները որևէ արգելք չունեն փոխհարաբերության մասին խոսելիս: պահում կանանց հանդեպ այդ մերժողականությունից:

արհամարհանք չի ցուցաբերում նրանց մետրություն է ցուցաբերում: Կանայք աշակերտների հետ Գալիլեայից դեպի

Ակնհայտ է, որ տասներկու հոգանոց նեղ շրջանակի մեջ Հիսուսն ընտրեց միայն տղամարդկանց, որոնք ժամանակների վախճանին պետք է ներկայացնեին տասներկու ցեղերը: Բայց իրականում միայն այդ տասներկուսը չէ, որ կանչվել էին առաքյալ լինելու: Առաքյալները, որոնք ուղարկվեցին քարոզելու Քրիստոսի հարության վարդապետությունը, կազմում էին համեմատաբար ավելի մեծ խումբ, որն իր մեջ կարող էր ներառել նաև կանանց: Առաջինը Ղուկաս ավետարանիչն էր՝ Հիսուսից ավելի քան մեկ սերունդ հետո, որ տասներկուսին բնորոշեց որպես առաքյալներ: Անժխտելի է, որ կանայք նշանակալից դեր ունեին Քրիստոսի առաքյալների խմբում: Այս կին աշակերտները հավատարիմ մնացին իրենց վարդապետին մինչև վերջ՝ կանգնելով խաչի մոտ և իրագործելով թաղումը: Իսկ Տասներկուսը փախուստի էին դիմել, որոնցից մեկն էլ մատնել էր Հիսուսին:

Հիսուսի խոսքերը, որոնք ակնհայտ դեմ են ընտանիքի գաղափարին, ի հայտ են գալիս այս համատեքստում: Հիսուսն իրեն եղբայր կամ քույր է համարում նրանց, ովքեր պատկանում են «Աստծո ընտանիքին», այսինքն՝ կատարում են Աստծո կամքը: Նրա համար արյունակցական կապերը երկրորդական են, իսկ սեռերի միջև կապը կորցնում է նշանակությունը: Այնուամենայնիվ, Հիսուս Նագովրեցին, չնայած ամուսնացած չէր, կուսությունը առաքյալ լինելու համար պայման չդարձրեց: Բացի այդ Հին Կտակարանը նույնպես ոչ մի տեղ չի գովում կուսակրոն վիճակը: Առաքյալները ամուսնացած էին և մնացին այդպիսին (Պողոսը ներկայացնում է իրեն որպես բացառություն): Ինչնիցե, այդ ժամանակաշրջանում կանանց կարգավիճակը հասարակության մեջ շատ ցածր էր թե՛ սոցիալապես և թե՛ իրավապես: Նրանց դերը զգալիորեն բարձրացվեց Հիսուսի կողմից: Հիսուսը դիմում է Աստծուն որպես Հայր՝ «Միերեի Հայր»: Բայց այս անելով՝ Նա մտադիր չէ շեշտել Աստծուն արական հատկանիշներով: Աստծուն դիմելիս «Հայր» անվան օգտագործումը Աստծո համար չի արտահայտում որևէ սեռական տարբերակում: Աստծո մասին չի կարելի պնդել որպես բացառապես արական սեռի: Հրեական աստվածաշնչում Աստված ունի նաև կանացի՝ մայրական բնորոշում: Աստծուն հասցեագրված «Հայր» անվանումը սիմվոլ է վերամարդկային, վերսեռային աստվածային իրականության, ով նաև սկիզբն է կանացիության և մայրության: Այն որևէ կերպ չի կարող գործածվել որպես հիմք հայրապաշտական (paternalistic) հասարակության համար:

Hans Kung, *Women in Christianity*
Անգլերենից թարգմանեց՝ Արսեն ուրկ. Թաղևոսյանը

Միջել Քուխստ

Տէ՛ր իմ, ես ընկա ևս մեկ անգամ, չեմ կարող շարունակել և երբեք չեմ հաջողի: Ես ամաչում եմ և չեմ կարող նայել քեզ, Տէ՛ր իմ: Մակայն նաև տանջվում եմ, քանզի գիտեմ, որ իմ կողքին էիր ծնկած, նայում էիր ինձ: Իսկ ահա ես, փոխանակ քեզ նայելու, տարվեցի կրթերի փոթորիկով, իմ հայացքը թեքեցի ու մի կողմ կանգնեցի, մինչդեռ դու կանգնած նայում էիր լուռ ու վշտալի, որպես սիրեցյալ, որ տեսնում է իր սիրելիի պարտությունը: Երբ քամին հանկարծ դադարեց, ինչպես որ սկսվել էր, երբ լույսը հանկարծ ժայթքեց խավարից, ես ինձ տեսա միայնակ, անթով, գարշացած, մեղքերս ձեռքերիս մեջ: Մեղքեր, որ ես ընտրել էի, ինչպես հաճախորդն է ընտրում իրեն հարմար իրը: Իսկ երբ ցանկացա վերադարձնել գնումը, այն ոչ ոք ետ չընդունեց: Այս անհամ, զագրելի մեղքերը, որ ես երբեմն ցանկացա, բայց այժմ չեմ կամենում, երկար մնացին ինձ հետ, խաղ դարձան ինձ համար, զբաղմունք եղան ինձ համար: Երբ ես սառնորեն անցնում էի քո կողքով, ես գուրվեցի դրանց և կերա դրանք որկրամոլությամբ: Դրանք իմն են հիմա, և տիրում են ինձ այնպես, ինչպես սարդոստայնն է պարուրում իր գոհին: Դրանց խորհուրդը մոլորեցնում է ինձ, հոսում երակներովս, լցնում սիրտս, ինչպես խավարն է պատում սաղարթոտ մի անտառ և ծածկում լույսի ցանկացած շող: Չեմ կարող հրաժարվել դրանցից, փախչում եմ, բայց նա գտնում է ինձ: Փախչում եմ նախ Քեզանից, քանի որ մեղանչեցի քո առջև ու մոռացա քեզ: Մոռացա, որովհետև միայն անձիս մասին էի խորհում, իսկ դու գիտես, որ մարդը չի կարող մի քանիսի մասին մտածել միևնույն ժամանակ: Մարդ պետք է ընտրի, և ես ընտրեցի: Միայն հիմա քո ձայնը, քո նայվածքը, քո սերը ինձ տանջում են և ավելի գործում քան մեղքն անգամ: Տէ՛ր, մի նայի ինձ այդպես, քանի որ ես աղտոտ եմ և մերկ, գործված և առանց ուժի: չեմ համարձակվում ավել խոստումներ տալ քեզ: Կարող եմ միայն լուռ կանգնել կողքիդ:

Նայիր որդի՛, վեր կաց: Արդյոք միայն քո անձի ունայնությունը չէ՞, որ վիրավորված է: Եթե ինձ սիրելի՛ր կողբայիր, սակայն կվստահելիր ինձ: Թե՛ կարծում ես քո հանդեպ իմ սիրուն սահման կա: Մակայն դու նորից շարունակում ես ապավինել սեփական ուժերիդ: Ինձ պիտի վստահես, հայցես ներողամտությունս և աչապարանոք ոտքի կանգնես: Ու տես՝ ամենից վատը ոչ թե ընկնելն է, այլ՝ մնալը գետնի վրա:

Հայերենի վերածեց հոգեշնորհ Գարեգին վրդ. Համբարձումյանը

Ֆեյսբուքում մեզ կարող եք հետևել այստեղ՝

www.facebook.com/gevorgianseminary

Ձեր հարցերը կարող եք ուղղել մեզ հետևյալ էլ. հասցեով՝

gevorgianseminary@gmail.com

Հասցե՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Գնորգյան հոգևոր ճեմարան

Հեռախոս՝ (010) 510 180

